ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«**Տրավ Սիմֆնի**» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ չորորդ հանրային քննարկում /4-րդ լսում /:

Վեդի համայնք Գոռավան բնակավայր: **01.04.2025 թ.**

2025 թվականի մարտի 26-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Գոռավան, Գևորգ Մարզպետունի 12/ տեղի ունեցավ «**Տրավ Սիմֆնի**» ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ չորորդ հանրային քննարկում /4-րդ լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ստեփանյանը, Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Խոստեղյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության տնօրեն՝ Ա. Բաբայանը և Ընկերության փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը, «ՇՄԱԳ» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Ն. Նասիբյանը:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն/ որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ թվով չորորդ հանրային քննարկումը /4-րդ լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և խոսքը փոխանցվեց վերջինիս:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ չորորդ հանրային քննարկումն է /4-րդ լսում/, վերջինս առաջարկեց «ՇՄԱԳ» փորձագետին և ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցներով, որից հետո կիրականացվեն քննարկումները, խոսքը փոխանցելով վերջիններին:

«ՇՄԱԳ» փորձագետ Ն. Նասիբյանը ներկայացրեց ամփոփ հաշվետվություն, ինչպես նաև երրորդ հանրային քննարկումից հետո ստացած կարծիքները:

Այնուհետ փորձագետ՝ Գ. Հակոբյանը ներկայացրեց Ընկերության գործունեությունը առաջիկայում, հանքավայրի հեռավորությունը բնակավայրից և արգելավայրից:

«ՇՄԱԳ» փորձագետ՝ Ն. Նասիբյանը հարցեր ուղղեց Ընկերությանը, արդյոք պահպանվելու են թույլատրելի և սահմանված հեռավորությունները բնակավայրից և ավազուտներից, պահպանվելու են արդյունահանման ծավալները և տարածքում կան արդյոք բարձր լարման էլեկտրասյուններ:

Հարցերին պատասխանեց փորձագետ՝ Գ. Հակոբյանը, բարձր լարման էլեկտրասյուններ չկան հանքի տարածքում, թույլատրելի հեռավորությունները պահպանված են բնակավայրից և ավազուտներից, օգտվելու են այլընտրանքային ճանապարհներից, փոշեզանգվածի նստեցման համար կիրառելու են ջրցան մեքենաներ:

Այնուհետ հարցեր ուղղեց Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Խոստեղյանը, արդյոք արտադրամաս լինելու է բնակավայրի վարչական տարածքում և հանքավայրում աշխատանքների համար ջուր որտեղից եք վերցնելու:

Հարցերին պատասխանեց Ընկերության տնօրեն Ա. Բաբայանը, արտադրամասը կառուցվում է բնակավայրի վարչական տարածքում՝ գերեզմանոցների հարևանությամբ, իսկ ջուրը կներկրեն, տարածքում ունեն 40.0 տոննա տարողությամբ ջրի կուտակման հնարավորություն:

Այնուհետ հարց ուղղեց Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս.Կարապետյանը, արդյոք ճանապարհների փոշենստեցում կիրականացվի:

Հարցին պատասխանեց փորձագետ՝ Գ. Հակոբյանը, ճանապարհների հարդեցումը և փոշենստեցումը կկարգավորվի տարածքում գործող Ընկերությունների կողմից, համատեղ:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեդի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքներն ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները հավանություն են տալիս «Տրավ Սիմֆնի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի բացահանքի հանքարդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային չորրորդ քննարկմանը /4-րդ լսում/:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի

Վեդի համայնքի ղեկավարի

պարտականությունները կատարող՝ Գ. Հակոբյան

Ձեռնարկող՝ «Տրավ Սիմֆնի»

ՍՊԸ -ի տնօրեն՝ / / Ա. Բաբայան

Վարող՝ / / Շ. Բաքոյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«**Տրավ Սիմֆնի**» **ՍՊ** Ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Սալաքար տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Գոռավան, Գևորգ Մարզպետունի 12 / շենքում **26.03.2025թ. 12:00** տեղի ունեցող հանրային քննարկում / 4-րդ լսում /:

գ. Գոռավան

26.03.2025 թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	[illegible]
2.	[illegible]	[illegible]	[illegible]
3.	[illegible]	[illegible]	[illegible]
4.	[illegible]	[illegible]	[illegible]
5.	[illegible]	[illegible]	[illegible]
6.	[illegible]	[illegible]	[illegible]
7.	[illegible]	[illegible]	[illegible]
8.	[illegible]	[illegible]	[illegible]
9.	[illegible]	[illegible]	[illegible]
10.	[illegible]	[illegible]	[illegible]
11.	[illegible]	[illegible]	[illegible]
12.	[illegible]	[illegible]	[illegible]
13.	[illegible]	[illegible]	[illegible]
14.	[illegible]	[illegible]	[illegible]
15.			
16.			
17.			
18.			
19.			